

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2017թ. առաջին եռամսյակ/

1. Ստացվել են նամակներ ընդամենը	1052
որից՝	
աջակցություն	1033
առաջարկություն	2
հարցում	8
բողոք	9
այդ թվում՝	
կրկնակի	11
կոլեկտիվ	17
2. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	12
կոմունալ-կենցաղային	38
շինարարական	23
արդձեռ/տրանսկապ/	2
գյուղատնտեսական	5
բնութ. պահպանութ	1
առևտրի	2
կենսաթոշակի և նպաստի	9
առողջապահության	49
կրթական և մանկ.հիմն	48
գիտութ.կուլտուրա	1
ֆինանսական	463
օրենսդրական	1
քաղ. և որդեգրման	3
աշխ.տեղ և հաշվառման	330
հողատկացում և հողօգտ.	2
միգրացիոն ծառ. վերաբերյալ	2
ապարատային	42
այլ հարցեր	19

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2017 առաջին եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2017 թվականի առաջին եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 1052 դիմում, որից 1033-ը՝ աջակցության խնդրանքով, 2-ը՝ առաջարկություն, 9-ը՝ բողոք, 8-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 64 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 330 դիմումներից դրական լուծում է ստացել 36-ը, 56-ի վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Զանգեզուրի պղնձամոլիբդենային և Կապանի լեռնահարստացման կոմբինատների տնօրեններին, իսկ մյուսները վերցվել են հաշվառման աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներում:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 36 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 463 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 311 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 32 քաղաքացիներից բավարարվել է 28-ի խնդրանքը, 2 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 7 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2017 թվականի առաջին եռամսյակում կատարվել է 196 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: